ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 601

10 օգոստոս2026թ.

ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ, ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔ ԿԱՄ ԻՐԱՑՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Անհատ Ձեռնարկատեր «Ենոք Արամայիսի Մանուկյան» /գործունեության հասցեն՝ Ծաղկաձոր համայնք, գյուղ Աղավնաձոր , Աղավնու աղբյուր թիվ 24/ տրամադրել՝

1) 2026 թվականի 3-րդ եռամսյակի ընթացքում հանրային սնունդ կազմակերպելու և իրացնելու թույլտվություն՝ 82,5 քմ տարածքում,

2) 2026 թվականի 3-րդ եռամսյակի ընթացքում ոգելից խմիչքների վաճառք կամ իրացում կազմակերպելու թույլտվություն՝ 82,5 քմ տարածքում,

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

10 օգոստոսի 2026
ք. Ծաղկաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 602

11 օգոստոս2026թ.

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 17-ի N132-Ն որոշման հավելված 2-ը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Միհրան Գեորգու Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության վկայական N 2493181 տրված 26 սեպտեմբերի 2007թ, կադաստրային ծածկագիր N 07-039-0002-0006), 0.25 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,գյուղ Հանքավան, 2-րդ փողոց, 1 կիսակառույց:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

11 օգոստոսի 2026
ք. Ծաղկաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 603

11 օգոստոս2026թ.

ՈՉ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 42-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 896 որոշմամբ և հիմք ընդունելով Շահում Ավեջանի լիազոր ներկայացուցիչ Հուսիկ Սամվելի Խաչատրյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Շահում Ավեջանին տրամադրել մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, ք. Ծաղկաձոր, Սարալանջի փողոց թիվ 45/5 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով պատկանող, 0.15 հա մակերեսով հողամասի վրա մինչև 40 քառ.մ մակերեսով, թվով երկու ոչ հիմնական շինությունների/շարժական կացարանների/ տեղադրման թույլտվություն:

2. Սահմանել, որ ոչ հիմնական շինությունները անհրաժեշտ է տեղադրել հողամասի սահմաններում, դրանք պետք է լինեն հանելու կամ տեղափոխելու համար ապամոնտաժվող տարրերից հավաքվող կամ տարածական կայունություն ունեցող ամբողջական միավորներ՝ բացառելով շինարարական աշխատանքներում թաց պրոցեսը, կապված տեղանքի առանձնահատկության հետ, կարող են կատարվել տեղանքին կապելու, հողին ժամանակավորապես ամրացնելու աշխատանքներ, ոչ հիմնական շինությունները հանելու կամ տեղափոխելու դեպքում պետք է վերականգնվի հողի մակերևույթը, դրա բարեկարգման ծածկույթը: Այդ շինությունների տեղադրման, տեղափոխման, հողի ծածկույթի վերականգնման հետ կապված բոլոր ծախսերը կրում է շինությունների սեփականատերը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

11 օգոստոսի 2026
ք. Ծաղկաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 604

11 օգոստոս2026թ.

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 09-Ի ԹԻՎ 518 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 10-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով, հիմք ընդունելով Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 08-ին հաստատված «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կոտայք -5 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի կազմում ներառված Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերը հաստատելու մասին» թիվ 127-Ն որոշումը, Ծաղկաձոր համայնքի գլխավոր հատակագծի պահանջները ,ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի կողմից 2026 թվականի հունիսի 29-ին տրված՝ թիվ ԱՏ-29062026-07-0145 տեղեկանքը , հաշվի առնելով այն հանգամանքը, որ հողամասը չի առնչվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերին և հիմք ընդունելով Արամայիս Վալոդյայի Խաչատրյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հաշվի առնելով Ծաղկաձոր համայնքի գլխավոր հատակագծի պահանջները՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, գյուղ Աղավնաձոր հասցեում գտնվող, Արամայիս Վալոդյայի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող, 07-010-0147-0048 կադաստրային ծածկագրով, 0,04831 հա մակերեսով հողամասի նպատակային և գործառնական

նշանակությունը՝ գյուղատնտեսական, վարելահողից փոփոխել բնակավայրերի , հասարակական կառուցապատման համար նախատեսված հողերի:

2.Հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխումից առաջացած կադաստրային արժեքի տարբերությունը կազմում է 829 096 (ութ հարյուր քսանինը հազար ինըսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ, որը անհրաժեշտ է վճարել 900125014101 հաշվեհամարին:

3. Նախորդ անգամ 0,05 հա մակերեսով հողամասի համար վճարված 858 100 (ութ հարյուր հիսունութ հազար հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամի ավելացված մասը՝ այն է 29 000 (քսանինը հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, վերադարձնել քաղաքացի Արամայիս Վալոդյայի Խաչատրյանին:

3.Սույն փոփոխությունը կատարել նաև Ծաղկաձոր համայնքի կադաստրային քարտեզում:

4.ՈՒԺը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2026 թվականի հուլիսի 09-ի «ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 518 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

11 օգոստոսի 2026
ք. Ծաղկաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 605

12 օգոստոս2026թ.

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Ծաղկաձոր համայնքին սեփականության իրավունքով պատկանող (կադաստրային ծածկագիր N 07-045-0102-0001-ից), 0.053 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, գյուղ Գոռգոչ, 1-ին փողոց, 1/3 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ե. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

12 օգոստոսի 2026
ք. Ծաղկաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 606

13 օգոստոս2026թ.

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, «Գովազդի մասին» օրենքի 11-րդ հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.«ԷԳԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը 2026 թվականի օգոստոս ամսվա ընթացքում Ծաղկաձոր համայնք, Սարալանջ, Տանձաղբյուր, Խաչատուր Կեչառեցու փողոցներում ՝ 84 քմ ընդհանուր մակերեսով այլ արտաքին գովազդ, 144 քմ սոցիալական գովազդ տեղադրելու թույլտվություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

13 օգոստոսի 2026
ք. Ծաղկաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 607

13 օգոստոս2026թ.

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 17-ի N132-Ն որոշման հավելված 2-ը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Նարգիզ Վարազդատի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության վկայական N 23072026-07-0086) մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,գյուղ Աղավնաձոր, Արտադրական թաղամաս, 1 հասցեում գտնվող 0.13858 հա մակերեսով հողամասի բաժանման հետևանքով առաջացած (ըստ բաժանման հատակագծի) 0.11771 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,գյուղ Աղավնաձոր, Արտադրական թաղամաս, 5 հողամաս ,իսկ մնացած 0.02087 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,գյուղ Աղավնաձոր, Արտադրական թաղամաս, 1 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

13 օգոստոսի 2026
ք. Ծաղկաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 608

13 օգոստոս2026թ.

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 17-ի N132-Ն որոշման հավելված 2-ը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Նարգիզ Վարազդատի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության վկայական N 23072026-07-0087) մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,գյուղ Աղավնաձոր, Արտադրական թաղամաս, 3 հասցեում գտնվող 0.54734 հա մակերեսով հողամասի բաժանման հետևանքով առաջացած (ըստ բաժանման հատակագծի) 0.07502 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,գյուղ Աղավնաձոր, Արտադրական թաղամաս, 6 հողամաս ,իսկ մնացած 0.47232 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,գյուղ Աղավնաձոր, Արտադրական թաղամաս, 3 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

13 օգոստոսի 2026
ք. Ծաղկաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 609

13 օգոստոս2026թ.

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 17-ի N132-Ն որոշման հավելված 2-ը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Մանուկ Յակոբի Ալիեմեզեանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության վկայական N 29072026-07-0257, կադաստրային ծածկագիր N 07-005-0016-0045), 0.06 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,քաղաք Ծաղկաձոր, Նոր թաղամասի 3-րդ փողոց, 19 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

13 օգոստոսի 2026
ք. Ծաղկաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 610

13 օգոստոս2026թ.

ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 15-Ի ԹԻՎ 49 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2026 թվականի հունվարի 15-ի «Ծաղկաձոր համայնքի համայնքային կազմակերպությունների 2026 թվականի ծախսերի նախահաշիվները հաստատելու մասին» թիվ 49 որոշման հավելված 6-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 6:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2026 թ. օգոստոսի 13-ին
ք. Ծաղկաձոր

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի
24 դեկտեմբերի 2007թ. թիվ 900-Ն հրաման

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

1.Հիմնարկի անվանումը՝_Ծաղկաձոր համայնքի<<Մեղրաձոր գյուղի Լևոն Գալստյանի անվան նախադպրոցական ուսումնական հաստատություն>>ՀՈԱԿ

2. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման

3. Հիմնարկին սպասարկող ՏԳԲ-ի անվանումը

4. Գանձապետական բյուջետային հաշվի համարը _900122002224

5. Գանձապետական արտաբյուջետային հաշվի համարը _____

9	1	1	51	207005

Ծրագրի անվանումը՝ նախադպրոցական կրթություն

Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2026թ.-ի պետական բյուջեից, ընդ որում												
		I եռ.			II եռ.			III եռ.			IVեռ.			Ընդամենը
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Աշխատավարձ և այլ վճարներ	4111	3159,0	6318,0	9500,0	13000,0	16500,0	20000,0	23500,0	27000,0	30500,0	34000,0	37500,0	41000,0	41000,0
Պարգևատրում	4112	0,0	0,0	1589,3	1589,3	1589,3	1589,3	1589,3	4859,0	4859,0	4859,0	4859,0	4859,0	4859,0
Բանկային ծառայություն	4211	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0
Էներգ. ծառայություններ	4212	500,0	1000,0	1500,0	2000,0	2000,0	2000,0	2000,0	2000,0	2800,0	2800,0	3000,0	3500,0	3500,0
Կոմունալ ծառայություններ	4213	30,0	45,0	60,0	75,0	90,0	105,0	120,0	135,0	150,0	164,0	164,0	164,0	164,0
Կապի ծառայություններ	4214	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0
Ներքին գործուղումներ	4221	200,0	200,0	200,0	200,0	200,0	200,0	200,0	200,0	200,0	200,0	200,0	200,0	200,0
Աշխատակազմի մասնագիտական զարգացման Ծառայություն	4233	200,0	200,0	200,0	200,0	200,0	200,0	200,0	200,0	200,0	200,0	200,0	200,0	200,0
Տեղեկատվական ծառայություններ	4234	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	20,0	20,0	20,0	20,0	20,0	20,0
Ներկայացուցչական ծախսեր	4237	250,0	250,0	250,0	250,0	250,0	250,0	250,0	250,0	250,0	250,0	250,0	250,0	250,0
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություն	4239	100,0	200,0	300,0	400,0	500,0	600,0	700,0	700,0	700,0	700,0	700,0	700,0	700,0
Մասնագիտական ծառայություններ	4241	50,0	50,0	50,0	100,0	100,0	100,0	150,0	300,0	300,0	300,0	300,0	300,0	300,0
Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0
Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	4252	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0
Գրասենյակային նյութեր, հագուստ	4261	100,0	200,0	300,0	400,0	400,0	400,0	500,0	729,0	729,0	729,0	729,0	729,0	729,0
Առողջապահական և լաբորատոր նյութեր	4266	30,0	30,0	30,0	30,0	30,0	30,0	30,0	30,0	30,0	30,0	30,0	30,0	30,0
Կենցաղային և հանրային սննդի նյութեր	4267	1000,0	2000,0	3000,0	4000,0	5000,0	6000,0	7000,0	7600,0	8600,0	9600,0	10600,0	11600,0	11600,0
Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	200,0	300,0	400,0	500,0	600,0	700,0	800,0	800,0	800,0	800,0	800,0	800,0	800,0
Պարտադիր վճարներ	4823	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	30,0	30,0	30,0	30,0	30,0	30,0
Ընդամենը		5919,0	10893,0	17479,3	22844,3	27559,3	32274,3	37139,3	44953,0	50268,0	54782,0	59482,0	64482,0	64482,0

Ծաղկաձոր Համայնքի<<Մեղրաձոր գյուղի Լևոն Գալստյանի անվան նախադպրոցական ուսումնական հաստատություն>>ՀՈԱԿ տնօրեն՝ Ա. Նազարյան

հաշվապահ՝ Լ. Հակոբյան

Կ.Տ.

07 «օգոստոս» 2026թ.

...ված N 3
«Հիմնարկների կողմից բյուջետային
հատկացումների հաշվին իրականացվող
ծախսերի (ելքերի) առանձին տեսակների
նախահաշվի օրինակելի ձևը»
Օրինակելի ձև N3 28 հունիսի 2007 թվականի
հաստատվել է ՀՀ ֆինանսների և դրամավարկային

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

նախահաշիվը՝ 64 482 000 (վաթսունչորս միլիոն չորս հարյուր ութսուներկու հազար) ՀՀ դրամ գումարով
(ընդամենը գումարը թվերով և տառերով)

Նարեկ Ռուբիկի Հարությունյան
(ՀՀ պետական կառավարման մարմնի ղեկավարի /համայնքի ղեկավարի/
ստորագրությունը և Ա.Հ.Ա.)

07 «օգոստոս» 2026թ.

ՆԱԽԱՀԱՇԻՎ 2

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ

«01»«հունվարի»2026թ. - «31»«դեկտեմբերի»2026թ.

1. Հիմնարկի անվանումը՝ **Ծաղկաձոր համայնքի<<Մեղրաձոր գյուղի Լև.ոն Գալստյանի անվան նախադպրոցական ուսումնական հաստատություն>>ՀՈՒԱԿ**
2. Փոստային հասցեն **Կոտայք՝ Ծաղկաձոր Մեղրաձոր 7 փողոց 2 շենք**
3. Հիմնարկի տեղաբաշխման մարզի և համայնքի կոդն ըստ բյուջետային ծախսերի տարածքային դասակարգման 207 | 005
4. ՀՀ պետական կառավարման (տեղական ինքնակառավարման) մարմնի անվանումը՝ **Ծաղկաձորի համայնքապետարան**
5. Հիմնարկը սպասարկող տեղական գանձապետական բաժնի (ՏԳԲ) անվանումը _____
6. Հիմնարկի տեղական գանձապետական բաժնում հաշվառման համարը
7. Ֆինանսավորման աղբյուրի կոդը (ՀՀ պետական բյուջե՝ 1, համայնքի բյուջե՝ 2) 2

8. Բյուջետային ծախսերի գործառական դասակարգ.
ծածկագիր 9 | 1 | 1
9. Ծրագրի անվանումը՝
10. Ծրագրի կոդը 51
11.ՀՀ պետական կառավարման (ՏԻ) մարմնի կոդն ըստ բյուջետային ծախսերի գերատեսչակ. դասակարգման 2 | 07 | 005
12. Չափի միավորը՝ հազար դրամ

Տողի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների		Նույն ժամանակահատվածի համար նախկինում հաստատված՝ գործող		Սույն նախահաշվով հաստատվող ցուցանիշները	այդ թվում՝ ըստ եռամսյակների (եռամսյակի ամիսների)աճողական			
	անվանումները	NN	նախահաշվի ցուցանիշները	նախահաշվում կատարված փոփոխություն-ները (ավելացումը՝ /+/, պակասեցումը՝/-/		I	II	III	IV
Ա	Բ	Գ	1	2	3	4	5	6	7
1100000	Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ,	x	64482,0		64482,0	17479,3	32274,3	50268,0	64482,0
1110000	1 .ՊԵՏԱԿԱՆ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԴՐԱՆՑ ԵՆԹԱԿԱ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ՝	x	44659,0		45859,0	11089,3	21589,3	35359,0	45859,0
1110000	**1,1 Աշխատանքի վարձատրություն**	x	44659,0	1200,0	45859,0	11089,3	21589,3	35359,0	45859,0
1111000	–Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	411100	41000,0		41000,0	9500,0	20000,0	30500,0	41000,0
1112000	- Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	411200	3659,0	1200,0	4859,0	1589,3	1589,3	4859,0	4859,0
1120000	2 Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում	x	19773,0	— 1200,0	18593,0	6390,0	10685,0	14879,0	18593,0

Ա	Բ	Գ	1	2	3	4	5	6	7
1121000	*2.1 Ընթացիկ ծախսեր*		3814,0	-150,0	3664,0	1560,0	2105,0	2950,0	3664,0
1121100	-գործառնական և բանկային ծառայությունների	421100	30,0	-30,0	0,0	0,0	0,0	0,0	0,0
1121200	-էներգետիկ ծառայություններ	421200	3500,0		3500,0	1500,0	2000,0	2800,0	3500,0
1121300	-Կոմունալ ծառայություններ	421300	164,0		164,0	60,0	105,0	150,0	164,0
1121400	-Կապի ծառայություններ	421400	120,0	-120,0	0,0	0,0	0,0	0,0	0,0
1121500	-Ապահովագրական ծախսեր	421500							
1121600	-Գույքի և սարքավորումների վարձակալություն	421600							
1121700	-Արտագերատեսչական ծախսեր	421700							
1122000	*2.2 Գործուղումների և շրջագայության ծախսեր*	x	200,0		200,0	200,0	200,0	200,0	200,0
1122100	-Ներքին գործուղումներ	422100	200,0		200,0	200,0	200,0	200,0	200,0
1122200	-Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր	422200							
1122300	-Այլ տրանսպորտային ծախսեր	422900							
1123000	*2.3 Պայմանագրային ծառայությունների ծեռք*	x	1150,0	20,0	1170,0	750,0	1050,0	1170,0	1170,0
1123100	-Վարչական ծառայություններ	423100							
1123200	-Համակարգչային ծառայություններ	423200							
1123300	-Աշխատակազմի մասնագիտական զարգացման	423300	200,0		200,0	200,0	200,0	200,0	200,0
1123400	-Տեղեկատվական ծառայություններ	423400	0,0	20,0	20,0	0,0	0,0	20,0	20,0
1123500	-Պահպանական ծառայություններ	423500							
1123600	-Կենցաղային և հանրային սննդի ծառայություններ	423600							
1123700	-Ներկայացուցչական ծախսեր	423700	250,0		250,0	250,0	250,0	250,0	250,0
1123800	-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	423900	700,0		700,0	300,0	600,0	700,0	700,0
1124000	*2.4 Այլ մասնագիտական ծառայությունների ծեռք*	x	150,0	150,0	300,0	50,0	100,0	300,0	300,0
1124100	-Մասնագիտական ծառայություններ	424100	150,0	150,0	300,0	50,0	100,0	300,0	300,0
1125000	*2.5 Ընթացիկ նորոգում և պահպանում (ծառայություններ և նյութեր)*	x	1050,0	-950,0	100,0	100,0	100,0	100,0	100,0
1125100	-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	425100	950,0	-950,0	0,0	0,0	0,0	0,0	0,0
1125200	-Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	425200	100,0		100,0	100,0	100,0	100,0	100,0
1126000	*2.6 Նյութեր*	x	13409,0	-250,0	13159,0	3730,0	7130,0	10159,0	13159,0
1126100	-Գրասենյակային նյութեր և հագուստ	426100	579,0	150,0	729,0	300,0	400,0	729,0	729,0
1126600	-Առողջապահական և լաբորատոր նյութեր	426600	30,0		30,0	30,0	30,0	30,0	30,0
1126700	-Կենցաղային և հանրային սննդի նյութեր	426700	12000,0	-400,0	11600,0	3000,0	6000,0	8600,0	11600,0
1126800	-Հատուկ նպատակային այլ նյութեր	426900	800,0		800,0	400,0	700,0	800,0	800,0
1210000	**2.Հարկեր,պարտադիր վճարներ և տույժեր կառավարման տարբեր մակարդակների կողմից միմյանց նկատմամբ**	x	50,0	-20,0	30,0	0,0	0,0	30,0	30,0
1216000	Պարտադիր վճարներ	482300	50,0	-20,0	30,0	0,0	0,0	30,0	30,0
1200000	*Բ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ*	x							
1215000	Վարչական սարքավորումներ	512200							
1000000	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	x	64482,0		64482,0	17479,3	32274,3	50268,0	64482,0

<<07>> օգոստոս 2026թ.

տնօրեն՝ Ա.Նազարյան

Կ.Տ.

հաշվապահ՝ Լ.Հակոբյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 611

13 օգոստոս2026թ.

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 17-ի N132-Ն որոշման հավելված 2-ը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Սլավա Աղվանի Եփրեմյանին,Տիգրան Սլավայի Եփրեմյանին,Արաքսյա Սլավայի Եփրեմյանին և Անահիտ Կարապետի Կարապետյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող (սեփականության վկայական N 10082026-07-0177, կադաստրային ծածկագիր N 07-045-0039-0012), 0.118 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,գյուղ Մեղրաձոր, 1-ին փողոց, 1-ին փակուղի, 9 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

13 օգոստոսի 2026
ք. Ծաղկաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 612

14 օգոստոս2026թ.

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 17-ի N132-Ն որոշման հավելված 2-ը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Արմեն Սուրենի Թադևոսյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության վկայական N 2525852 տրված 12 հոկտեմբերի 2007թ, կադաստրային ծածկագիր N 07-045-0035-0001), 0.07 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,գյուղ Մեղրաձոր, 5-րդ փողոց, 21 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

14 օգոստոսի 2026
ք. Ծաղկաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 613

14 օգոստոս2026թ.

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Ծաղկաձոր համայնքին սեփականության իրավունքով պատկանող (կադաստրային ծածկագիր N 07-017-0035-0020,0010), 0.03838 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,գյուղ Փյունիկ, 1-ին փողոց, 4-րդ նրբանցքի 1-ին փակուղի, 7/1 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

14 օգոստոսի 2026
ք. Ծաղկաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 614

19 օգոստոս2026թ.

ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 17-ի N132-Ն որոշման հավելված 2-ը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Հասմիկ Աշոտի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության վկայական N 2519757 տրված 19 դեկտեմբերի 2007թ), 56.8 քմ մակերեսով բնակարանին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,գյուղ Մեղրաձոր, 7-րդ փողոց, 11/4 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

19 օգոստոսի 2026
ք. Ծաղկաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 615

19 օգոստոս2026թ.

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, «Գովազդի մասին» օրենքի 11-րդ հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.« Արմադա Կո »Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը /տրամադրել 2026 թվականի օգոստոս ամսվա ընթացքում Ծաղկաձոր համայնք, Պահլավունյաց փողոց, թիվ 108/1 հասցեում ՝ 68,8 քմ ընդհանուր մակերեսով արտաքին գովազդ(էլեկտրոնային վահանակ) տեղադրելու թույլտվություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

19 օգոստոսի 2026
ք. Ծաղկաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 616

19 օգոստոս2026թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱԶՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» օրենքի 10-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2026 թվականի օգոստոսի 13-ի թիվ 2090-Ա հրամանը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնի անձնագրերը՝ համաձայն 1, 2 հավելվածների:
2. Ուժը կորցրած ճանաչել Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2022 թվականի հուլիսի 06-ի «Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» թիվ 603 որոշման՝ հավելված 22-ի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2026թ. օգոստոսի 19-ին
ք. Ծաղկաձոր

Հավելված 1
ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր
համայնքի ղեկավարի 2026 թվականի
օգոստոսի 19-ի թիվ 616 որոշման

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

ա. ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջատար մասնագետ՝ ծածկագիր՝ **3.1-13**

բ. Բաժնի առաջատար մասնագետին «Համայնքային ծառայության մասին» օրենքով (այսուհետ՝ օրենք) սահմանված կարգով պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է աշխատակազմի քարտուղարը (այսուհետ՝ քարտուղար):

1.2. Ենթակա և հաշվետու է

Առաջատար մասնագետը անմիջականորեն ենթակա և հաշվետու է բաժնի պետին: Առաջատար մասնագետն իրեն ենթակա աշխատողներ չունի:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

ա. Բաժնի առաջատար մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է բաժնի առաջատար մասնագետներից մեկը ՝ բաժնի պետի հայեցողությամբ:

բ. Օրենքով նախատեսված դեպքերում Բաժնի առաջատար մասնագետին փոխարինում է համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գտնվող՝ սույն պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող անձը, իսկ դրա անհնարինության դեպքում այլ անձը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:

գ. Բաժնի առաջատար մասնագետը Բաժնի առաջատար մասնագետներից մեկի բացակայության դեպքում փոխարինում է նրանց՝ բաժնի պետի հայեցողությամբ:

1.4. Աշխատավայրը

Առաջատար մասնագետի հիմնական գործունեության վայրն է Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմը:

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները.

Բաժնի առաջատար մասնագետը՝

ա) կատարում է բաժնի պետի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով.

բ) ապահովում է բաժնի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթղթերը.

գ) հետևում է բաժնի պետի հանձնարարականների, համապատասխան ժամկետներում, կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է բաժնի պետին.

դ) իր լիազորությունների սահմաններում, անհրաժեշտության դեպքում, նախապատրաստում և բաժնի պետին է ներկայացնում է իր աշխատանքային ծրագրերը, ինչպես նաև առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.

ե) իրականացնում է քաղաքացիների հերթագրում՝ բաժնի պետի մոտ ընդունելության համար.

զ) բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է բաժնի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին.

է) բաժնի պետի հանձնարարությամբ սահմանված դեպքերում և կարգով համայնքի բնակչությանն իրազեկում է միջավայրի ծրագրվող քաղաքաշինական փոփոխությունների մասին.

ը) մասնակցում է համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառմանը և համայնքի հողային հաշվեկշռի կազմմանը.

թ) իրականացնում է ինքնակամ կառույցների հայտնաբերման, կանխարգելման և օրինականացման աշխատանքներ,

ժ) մասնակցում է համայնքի սեփականություն հանդիսացող հողերի արդյունավետ և նպատակային օգտագործմանն ուղղված աշխատանքներին: Հավաքագրում և համակարգում է համայնքի հողային ռեսուրսներին վերաբերող տեղեկատվությունը:

ժա) մասնակցում է համայնքի գյուղատնտեսության զարգացմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների մշակման ու իրականացման աշխատանքներին:

ժբ) հավաքագրում և համակարգում է համայնքի գյուղատնտեսական նշանակության հողերի, գյուղատնտեսական գործունեության և ոլորտի խնդիրների վերաբերյալ տեղեկատվությունը:

ժգ) մասնակցում է գյուղատնտեսության ոլորտում համայնքային ծրագրերի, միջոցառումների և աջակցության ծրագրերի իրականացման աշխատանքներին:

ժդ) մասնակցում է համայնքի տարածքում շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված միջոցառումների կազմակերպմանը և իրականացմանը:

ժե)ուսումնասիրում և վերլուծում է համայնքի տարածքում առկա բնապահպանական խնդիրները և դրանց վերաբերյալ ներկայացնում առաջարկություններ:

ժզ) մասնակցում է համայնքի կանաչ տարածքների, ծառերի և թփերի պահպանության, խնամքի, վերականգնման և ընդլայնման աշխատանքներին:

ժէ) իր իրավասության շրջանակում մասնակցում է բնական ռեսուրսների՝ հողի, ջրի, բուսականության և այլ բնական պաշարների պահպանությանն ուղղված աշխատանքներին:

ժը) մասնակցում է կլիմայի փոփոխության ազդեցությունների նվազեցման, համայնքի կլիմայական դիմակայունության բարձրացման և բնապահպանական ռիսկերի նվազեցման միջոցառումների մշակմանը և իրականացմանը:

ժթ)մասնակցում է համայնքի կանաչապատման, բարեկարգման և շրջակա միջավայրի բարելավման ծրագրերի մշակմանն ու իրականացմանը:

ի) բաժնի պետի հանձնարարությամբ ուսումնասիրում է դիմումներում և բողոքներում բարձրացված հարցերը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում նախապատրաստում պատասխան

իա) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Բաժնի առաջատար մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ :

Բաժնի առաջատար մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

3. Կազմակերպական շրջանակը

3.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը.

Բաժնի առաջատար մասնագետը՝

ա) Բաժնի աշխատանքների կազմակերպման, ծրագրման, համակարգման, ղեկավարման և վերահսկման լիազորություններ չունի.

բ) կատարում է բաժնի պետի հանձնարարականները, համայնքապետարանի էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունը

գ) պատասխանատվություն է կրում օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, լիազորությունները վերազանցելու համար:

3.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Բաժնի առաջատար մասնագետը իր պաշտոնի անձնագրով նախատեսված դեպքում մասնակցում է հիմնախնդիրների լուծմանը, որոշումների ընդունմանը և հանձնարարականների կատարմանը.

3.3. Շփումները և ներկայացուցչությունը.

առաջատար մասնագետը՝

ա) Բաժնի ներսում շփվում է իր լիազորությունների շրջանակներում՝ այդ թվում՝ այլ բաժինների աշխատողների և պաշտոնատար անձանց հետ.

բ) Բաժնից և աշխատակազմից դուրս շփվում է բաժնի պետի հանձնարարությամբ.

գ) Բաժնից և աշխատակազմից դուրս որպես ներկայացուցիչ հանդես գալու լիազորություններ չունի:

3.4. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

ա. Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է խնդիրների լուծմանը և գնահատմանը,

բ. բարդ խնդիրների բացահայտմանը, դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներին մասնակցելու լիազորություններ չունի:

4. Պաշտոնին ներկայացվող պահանջները

4.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Առաջատար մասնագետը ունի առնվազն միջնակարգ կրթություն:

4.2. Մասնագիտական գիտելիքները և հմտությունները

ա. ունի ՀՀ Սահմանադրության, ՀՀ հողային օրենսգրքի, «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Հանրային ծառայության մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին»,«Քաղաքաշինության մասին» օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

բ. տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

գ. ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

4.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

աշխատանքային ստաժ և փորձ չի պահանջվում:

5. Համայնքային ծառայության դասային աստիճանը

5.1 Բաժնի առաջատար մասնագետին օրենքով սահմանված կարգով շնորհվում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 1-ին դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան:

Հավելված 2
ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր
համայնքի ղեկավարի 2026 թվականի
օգոստոսի 19-ի թիվ 616 որոշման

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

ա. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի (այսուհետ՝ բաժին) առաջատար մասնագետ՝ ծածկագիր՝ **3. 1-14 :**

բ. Բաժնի առաջատար մասնագետին «Համայնքային ծառայության մասին» օրենքով (այսուհետ՝ օրենք) սահմանված կարգով պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է աշխատակազմի քարտուղարը (այսուհետ՝ քարտուղար):

1.2. Ենթակա և հաշվետու է

Առաջատար մասնագետը անմիջականորեն ենթակա և հաշվետու է բաժնի պետին:
Առաջատար մասնագետն իրեն ենթակա աշխատողներ չունի:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

ա. Բաժնի առաջատար մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է բաժնի առաջատար մասնագետներից մեկը՝ բաժնի պետի հայեցողությամբ:

բ. Օրենքով նախատեսված դեպքերում բաժնի առաջատար մասնագետին փոխարինում է համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գտնվող՝ սույն պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող անձը, իսկ դրա անհնարինության դեպքում այլ անձ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:

գ. Բաժնի առաջատար մասնագետը Բաժնի առաջատար մասնագետներից մեկի բացակայության դեպքում փոխարինում է նրանց՝ բաժնի պետի հայեցողությամբ:

1.4. Աշխատավայրը

Բաժնի առաջատար մասնագետի հիմնական գործունեության վայրն է Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմը՝ Մեղրաձորի նստավայր:

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները.

Բաժնի առաջատար մասնագետը՝

ա. կատարում է բաժնի պետի հանձնարարությունները՝ժամանակին և պատշաճ որակով.

բ. Իրականացնում է **Մեղրաձոր-Գոռգոչ, Աղավնաձոր, Մարմարիկ, Արտավազ-Փյունիկ, Հանքավան** բնակավայրերի իրավաբանական և ֆիզիկական անձանց գույքահարկի, հողի հարկի մուտքագրում և հավաքագրումը, ինչպես նաև Մեղրաձոր բնակավայրի անշարժ գույքի հարկի հաշվառման, հավաքագրման և մուտքագրման աշխատանքներ:

գ. հետևում է բաժնի պետի հանձնարարականների համապատասխան ժամկետներում կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է բաժնի պետին.

դ. բաժնի պետին ներկայացնում է իր աշխատանքային ծրագրերը, անհրաժեշտության դեպքում, իր լիազորությունների սահմաններում նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.

ե. բաժնի պետի հանձնարարությամբ իրականացնում է աշխատակազմի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի, առաջարկությունների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի պահպանության և արխիվացման աշխատանքները.

զ. բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է աշխատակազմի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին.

է. իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ.

Բաժնի առաջատար մասնագետն ունի Օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

3. Կազմակերպական շրջանակը

3.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը.

Բաժնի առաջատար մասնագետը՝

ա) բաժնի աշխատանքների կազմակերպման, համակարգման, ղեկավարման և վերահսկման լիազորություններ չունի.

բ) կատարում է բաժնի պետի հանձնարարականները, մասնակցում է բաժնի գործավարությանը իրավաբանական և ֆիզիկական անձանց գույքահարկի, հողի հարկի, անշարժ գույքի հարկի, տեղական տուրքերի և վճարների հավաքագրման գործընթացին.

գ) պատասխանատվություն է կրում օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները, աշխատակազմի առջև դրված խնդիրները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, լիազորությունները վերազանցելու համար:

3.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

